

2570

66

24560

24561

24562

24563

24564

24565

24566

24567


84

---

P-24

84

# ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԵՐԿՐԱԶԱՓԸ



ԵՒՍ ԾԻԾԱՂԱՇՍՐԺ ԶԱԻՆՇՏ ՄԷԿ ԱՐԱՐ



ՔԱՂՈՒԱԾ ԲԻԷՌ ՎԷՊԵՐԻ  
La Danse à la Mode ԳՕՄԷՏԻԷՆ

**P. ASSADOURIAN**

**AMATEUR-COMIQUE**

ՖՐԱՆՍԵՐԷՆԷ ՓՈՆԱԿՐԵՅ

ԶԱՐԵՀ ԱՐՇԱԿԵԱՆ



22-085


ՏՊԱԳՐ. ԱԿԻԹԵՄՊԵՐԱՆ

Կ. Ն. ՄԱԳԱՍՃԵԱՆ

Կ. ՊՈՂԻՍ

1910






### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՍԱՐԻՄԵԱՆ	Գործարանատեր	50 Տրկն.
ԶՍԻՈՒՀԻ	Անոր կինը	40 Տրկն.
ՇԱՔԷ	Անոնց աղջիկը	19 Տրկն.
ԱՂԻՍ	» »	20 Տրկն.
ԼԵԻՈՆ ԲԱՐՍԿԵԱՆ	Երկրաչափ	26 Տրկն.
ԱՐՓԻՆԷ ՇՈՒՇԱՆԵԱՆ	Բարեկամուհի	22 Տրկն.
ՄԱՐԻԱՄ	Պարսիզակցի սպասուհի	
ՄԱՐԿՈՍ	Վանեցի խոհարար	

### ՏԵՍԱՐԱՆԸ Կ'ԱՆՑՆԻ ԲԵՐԱՅԻ ՄԷՁ



2790-55 4



### ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ԵՐԿՐԱԶԱՓԸ

ԽԻՍ ՔՐԲԶԱԼԻՐ ԶԱԻԵՇՏ ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

**P. ASSADOURIAN**  
**AMATEUR - COMIQUE**

Բեմը կը ներկայացնէ նոյն հիւրասրան մը: Աջ կողմը գեղեցիկ դաշնակ մը, ձախին՝ պասուհան եւ դուռ: Խորք՝ մուսֆի դուռ: Վարագոյրը բացուելուն՝ Շաֆէ, դաշնակին առջեւ նստած, քանկոյի եղանակ մը կ'աշխատի ստրվիլ. Ալիս, քովը կեցած, կը հետեւի նուագին:

#### Ա. ՏԵՍԻԼ

Շաքէ, Ալիս, յետոյ Մարիամ

Շաքէ, (երգելով).— Լա՛, Լա՛, Լա՛, Լա՛... (միեւնոյն ասեմ կը նուագէ):

Ալիս.— Ո՛հ, ո՛հ, այգպէս չէ:

Շաքէ, (քնդհատելով).— Ի՛նչ, այսպէս չէ՞. բայց մտիկ ըրէ՛. (կը նուագէ). Լա՛, Լա՛, Լա՛, Լա՛...:

Ալիս.— Աղուո՛րս: դաշնակայարգարի մը պէս կը նուագես. պարի չափը չես կրնար տալ. անտեղեակ ես բոյոյովին: Կեցի՛ր, ելի՛ր որ ես նուագեմ:

Շաքէ.— Ձէ՛, չէ՛, չեմ ուզեր. (կ'երգէ). Լա՛, Լա՛, Լա՛, Լա՛...:

Ալիս.— Այս անգամ աւելի լաւ է. բայց նորէն չի յարմարիր ոտքի...: Կեցի՛ր որ ցոյց տամ. (կը նստի). Հիմա կը տեսնես:

Շաքէ.— Օ՛հ, դուն ալ չպիտի յաջողիս:

Ալիս.— Մտիկ ըրէ՛. (կը նուագէ երգելով). Լա՛, Լա՛, Լա՛, Լա՛...:

Շաքէ.— Իմա ալ այդպէս էր...: Ա՛հ, որքա՛ն սիրուն է. (կը պարէ):

Ալիս, (նուագելով).— Շատ գէշ կը պարես Շաքէ:

Շաքէ.— Ընդհակառակը, շատ լաւ կը պարեմ:

Ալիս.— Ատիկա արջու քայուածք է. բուն թանկօն այդպէս չէ. (կը շարունակէ նուագել):

Շաքէ.— Ա, ս ալ իմ թանկօս է. ամէն մարդ իր թանկօն ունի, այնպէս չէ՞:

Ալիս.— Բուկդ հիւանդոտներու թանկօն է: (կը մտնէ Մարիամ):

Շաքէ.— Կը սխալի՛ս. երէկ Տիկին Կանաչեանի տունը, թէյի միջոցին պարեցի և մեծ յաջողութիւն գտայ:

Ալիս.— Այո՛, ճիշդ է, որովհետեւ Տիկ. Կանաչեանի տունը յաճախողները շատ դժուարահաճ չեն:

Մարիամ, (առաջ գալով).— Հանրմներ...:

Շաքէ.— Ներողութիւն, անոնք...:

Մարիամ, (ակամայ պարելով).— Մարի՛կ. իշքա՛ն խօշ է աս օյինը...:

Շաքէ, (գայն տեսնելով).— Այդ ի՞նչ է, Մարիամ, ի՞նչ եղար:

Մարիամ, (շփոթած).— Ա՛ֆ կ'ընես, հանրմս, ուզելովս չէր...:

Ալիս.— Ըսել է դուն ալ կը խաղաս...:

Մարիամ.— Ի՛շ կ'ըսես, հանրմ, շաբաթ օրերը բրօվա կ'ընիմ. բմա, հանրմներուն խաղացած օյինը պաշխա պիչիմ է:

Շաքէ.— Իրա՞ն:

Մարիամ.— Հապա՛. մեր դեղացի վարդանը ալըշարմիշ ըրաւ ինձի... հէ՛մ թամամը սորվեցուց... նայեցէք. (պարելու կը պատրասուի):

Ալիս.— Աղէ՛կ. աղէկ. ձգէ հիմա. ի՞նչ կ'ուզես...:

Մարիամ.— Մարի՛կ, աղէկ ըսիր. մոռցեր էի... արտեղ ձեր ընկերուհին՝ Օր. Արփինէն կայ, կը հարցնէ թէ կրնա՞ք հրամանքը խապուլ ընել...:

Շաքէ.— Անշուշտ, անշուշտ, թող գայ. (դէպի խորի դուռը երթալով կը կանգէ). Արփինէ՛, Արփինէ՛, (Մարիամ կ'ելլէ՛ ձախէն):

Բ. ՏԵՍԻԼ

Արփինէ, Շաքէ և Ալիս

Արփինէ, (կը մտնէ).— Բարեւ Ալիսս. (կը համբուրէ). բարեւ Շաքէս, (նոյնպէս). արդեօք ձեզ անհանգի՞ստ կ'ընեն:

Ալիս.— Ամենեւին. մինք ալ թանկօյի փորձ կ'ընէինք. «Մը տա ասքօ էլ թանկօ»:

Արփինէ.— Գիտեմ, շատ սիրուն է:

Շաքէ.— Ի՞նչ է ատոր նշանակութիւնը:

Արփինէ.— Կը նշանակէ. «Աստուած իմ, որքան կը զգու իմ թանկօյէն»:

Ալիս.— Ո՛հ, զարմանալի է. կ'ուզե՞ս փորձել:

Արփինէ.— Շնորհակալ եմ. ես ալ ունիմ իմ թանկօս...: Ռուժմանական թանկօ մը:

Շաքէ.— Ա՛հ, ի՞նչպէս է. ցուցուր մեզի... ըսէ՛:

Արփինէ.— Դժբախտաբար, ժամանակ չունիմ. աւելի ճիշդ՝ սիրտ ալ չունիմ հիմա ատոր համար:

Ալիս.— Վի՞շտ ունիս:

Շաքէ.— Մէ՞կը կը սիրես:

Արփինէ.— Աստուած իմ:

Ալիս.— Լեզուիդ տակ բան մը կայ. գաղտնիք մը ունիս դուն:

Արփինէ.— Դեռ չեմ կրնար պատմել ձեզի:

Շաքէ.— Դո՞նէ կրնաս ըսել թէ երիտասա՞րդ է:

Արփինէ.— Այո՛:

Ալիս.— Եւ գեղեցի՞կ:

Արփինէ.— Տղեկ չէ:

Շաքէ.— Էրիկմարդէ մը ատկէ աւելին չպահանջուիր: Քեզ կը սիրէ՞:

Արփինէ.— Խենթի պէս:

Ալիս.— Վստա՞հ ես: Ինչէ՞ն գիտես:

Արփինէ.— Երբ հետը գտնուիմ, ապուշ կը դառնայ: Եւ սակայն, շատ խելացի է... մեծ ապագայ ունեցող երկրաչափ մըն է: Վարժարանէն առաջին ելած է:

Ալիս.— Ե՞րբ պիտի ամուսնանաք:

Արփինէ.— Թերեւս երբէ՛ք:

Շաքէ.— Ո՛հ, ի՞նչ հետաքրքրական բան... Պիտի փախցնէ՞ քեզ:

Արփինէ.— Ո՛չ... Երբէ՛ք չպիտի համարձակի այդ բանին: Պարկեշտ տղայ մըն է, և մանաւանդ շատ երկչոտ:

Ալիս.— Արդէն դուն ալ երկու փարայի կամք չունիս:

Արփինէ.— Աւելի աղէկ... Երբ Լեւոն փոքր զիրքի մը տէր ըլլայ... այն ատեն կը տեսնենք:

Շաքէ.— Ա՛հ, Լեւոն կը կոչուի... ատիկա անհամ անուն մըն է:

Արփինէ.— Ես ալ ձեզի նուիրելու չեմ զայն:

Շաքէ.— Ներողութիւն, սիրելիս, քիչ մը հետաքրքիր ենք: Վերջապէս Լեւոնը գէշ չէ, մանաւանդ երկրաչափի մը համար:

Արփինէ.— Արդեօք չէ՞ք գիտեր պարապ պաշտօն մը, նոյնիսկ քիչ ամսականով:

Ալիս.— Ո՛հ, ամիս մը առաջ հայրիկը մէկը կը փնտռեր իր գործարանին համար. բայց, կարծեմ գտաւ ուզածը:

Շաքէ.— Եւ յետոյ, հայրիկը կը զբաղի քիմիական ազդերով: Հարկաւ այդ տեսակ բաներու մէջ տեսնել չես ուզեր քու ապագայ էրիկդ:

Արփինէ.— Ինչո՞ւ չէ: Գործին գէշը չըլլար:

Շաքէ.— Բան մը կը փնտռենք քու Լեւոնիդ համար: Պիտի ամուսնանաք և մենք ալ պատուակալ օրիորդներ պիտի ըլլանք:

Ալիս.— Ա՛հ, ատրկա կ'ուզեմ... Այդ մեր միջնորդչէքն է... (ոսփի ձայն):

Շաքէ.— Լռեցէ՛ք, մայրիկը կուգայ: (Կը մտնէ Տիկին Զարուհի):

Գ. ՏԵՍԻԼ

Նոյնք և Տիկին Զարուհի

Զարուհի.— Օ՛, փքրիկ Արփինէս, հիմա եկայ դեռ և հոս ըլլալդ ըսին ինծի:

Արփինէ.— Օ՛, բարի լոյս, Տիկին Զարուհի, ի՞նչպէս էք:

Զարուհի.— Չափազանց յոգնած եմ. Տիկին Կանահանի տունէն կուգամ: Պատահմամբ հոն գացի... շատ բազմութիւն կար... կենալու միտք չունէի... բայց պարի սկսան... ա՛հ, տեսնելու արժանի բան էր... Զարլսթօն, Պլէք պօթըն, Ուանսթէփ... և մանաւանդ թանկօ մը պարեց, արտագոյ կարգի թանկօ մը, որ նոր սորվեր է նշանաւոր արուեստագէտ դասատուէ մը... հիանալի բան էր... տեսնելու համար կեցայ:

Ալիս.— Եւ հայրիկը, որ կը սպասէր հոս...

Զարուհի.— Ա՛հ, մոռցած էի... ժամը քանի՞ն է:

Արփինէ.— Հինգն է, Տիկին:

Զարուհի.— Վստահ եմ թէ ամուսինս սաստիկ բարկացած է. ի՞նչ պիտի ըսէ արդեօք:

Ալիս.— Ո՛հ, հայրիկը շատ բարի է:

Զարուհի.— Այո՛, հայրիկը բարի է. բայց երբէք չկրցայ սա արգիական պարերը սիրել տալ անոր, պարզապէս կը գանի ատկէ... անոր ատենը թուղթ կը խաղային: Ո՛հ, եթէ տեսնէիք այդ շիլիական թանկօն, բոլորովին կը տարտղնուի, երկուքի կը

կոտորուելի, մէկ ոտքի վրայ կը ցաակուելի... հիանալի է... հիանալի:

Շաքէ.— Բայց ի՞նչ քայլի վրայ շինուած է, մայրիկ:

Զարուհի.— Չեմ յիշեր. շատ խառնակ է: Արդէն Տիկին կանաչեան խոստացաւ ինծի զրկել այդ բարձր արուեստագէտը:

Արփինէ.— Պարբի դասատու՞ն:

Զարուհի.— Այո՛, շատ բարձր արուեստագէտ մըն է եզեր, բայց այժմ ստիպուել է այս ձեւով շահիլ իր ապրուստը:

Ալիս.— Ո՛հ, յուզիչ բան է այդ... ի՞նչպէս կը կոչուել:

Զարուհի.— Չե՛ գիտեր, հոն չէր ինքը... շաբաթը անգամ մը կուգայ... իրարու ձեռքէ կը յափըջտակեն գայն: Եւ սակայն, երեք ոսկի կը պահանջէ կէս ժամուան համար:

Արփինէ, (խնդալով).— Սուղ չէ:

Զարուհի.— Այնպէս չէ՞... երբ խորհինք թէ բժիշկ մը երկու ոսկի կ'առնէ այցելութեան մը համար:

Արփինէ.— Եւ դաշնակի դասատու մը երկու ոսկի ժամը:

Շաքէ.— Այո՛, բայց պարի դասատու շատ կայ, մինչդեռ թանկոյի լաւ վարպետ մը...

Զարուհի.— Եւ մանաւանդ այդ տեսակ թանկոյի մը: Չի կրցայ դիմանալ... խնդրեցի Տիկին կանաչեանէն որ հասցէն տայ ինծի:

Շաքէ.— Տուա՞ն:

Զարուհի.— Այո՛, շատ ազնիւ կին է:

Ալիս.— Եւ սիրալիր:

Արփինէ.— Կարծեմ թէ շատ ազդեցութիւն ունի ձեր վրայ:

Զարուհի.— Կարելի չէ բան մը մերժել անոր... խոստացաւ ինծի զրկել արուեստագէտը:

Ալիս.— Մեզի թանկօ՞ պիտի սորվեցնէ:

Զարուհի.— Պիտի սորվեցնէ, այո՛, բայց պզտիկ գործ չէ այդ. շատ խառնակ բան մը կ'երեւի ինծի... սպասեցէք որ միտքս դայ...:

Ալիս.— Արփինէ՛, դաշնակի նստէ:

Արփինէ.— Ամենայն սիրով. (կը նստի եւ կը նուագէ):

Զարուհի.— Ա՛հ, միտքս կուգայ. տեսէ՛ք. երեք քայլ ետ...:

Շաքէ.— Մայրի՛կ, քավալիէդ ըլլա՞մ:

Զարուհի.— Այո՛, այո՛, դիւրութիւն կ'ըլլայ ինծի: Սկիզբէն նուագէ՛, Արփինէ, Այո՛, երեք քայլ ետ, յետոյ դառնայ. դէպի աջ ծածանում մը, դէպի ձախ ծածանում մը. դառնայ... դէպի ետ երկու սահուն քայլ... (Այս միջոցին կը մտնէ Արիսակէս Սարիմեան). իրարու ձեռք կը բռնեն... սրունքի դարձ մը, միեւնոյն տեսն...:

Դ. ՏԵՍԻՆ

Նոյնք և Արիստակէս Սարիմեան

Արիս, (բարկութեամբ).— Այս ի՞նչ է... նորէ՞ն: Շաքէ, (ցածեմ Արիսին).— Վա՛յ. հայրիկը...

Զարուհի.— Չեմ պարեր... ես... բան...

Արիս.— Օ՛, կը պարե՛ս, և թանկօ կը պարես...

Զար.— Արիստակէ՛ս. չտեսա՞ր Օր. Արփինէն...

Արիս.— Այո՛, ներեցէք օրիորդ, շիտակը շատ ծանր բան է այս. երեւակայեցէ՛ք որ երկու ամիս է ի վեր տանս մէջ երկու քայլ չեմ կրնար առնել, կարծես պարասրահը կը դառնուինք... հապա սա երկու (աղջիկները ցուցնելով) ապուշները...

Ալիս.— Ա՛հ, հայրիկ:

Արիս.— Ամբողջ օրը կը պարեն... ծառաներս կը պարեն... պաշտօնեաներս կը պարեն... զերջապէս կար մէկը սր խելացի կը կարծէի, այսինքն կինս...

Զար.— Զաւակներուս առջեւ կը նախատեսա զիս :  
 Արիս.— Ամենեւի՛ն, սակայն վստահ եղիր որ իր աղջիկներուն առջեւ երկու սահում, մէկ տատանում ընող մայր մը լաւ օրինակ չէ... Օր. Արփինէ՛, ձեր մայրն ալ կը պարէ՞ արդեօք :

Արփինէ.— Մա՛յրս...

Արիս.— Այո՛, Տիկ. Շուշանեան, այնչափ բարձր ու խելացի. չեմ տեսած պարելը :

Արփինէ.— Յերեկէն մինչեւ կէս գիշեր այդ է ըրածը :

Զար.— Տեսա՞ր հիմա...

Արիս.— Աղէ՛կ, բան մը չըսի : Տար աղջիկներդ պարի դասերու, տար պալօները... յիմարութիւն է այդ... կը վախնամ որ ես ալ ի վերջոյ պիտի սկսիմ պարելու... :

Արիս.— Ա՛հ, հայրիկ, որչա՛փ երջանիկ կ'ըլլա՝ յինք... :

Արիս.— Ահաւասի՛կ, կը լսէ՞ք Օր. Արփինէ, կ'ուզեն որ քառասունէն ետք նոր ձեւի մտնամ :

Զար.— Հապա ի՞նչ գիտցար, ասկէ ետք պարել չգիտցողը մարդու մէջ չի կրնար մտնել :

Արիս.— Աղ ցանեմ որ չհոտիս... այդ պարերուն մէկ շնորհքով կողմը ցուցուր նայիմ :

Արփինէ.— Իրաւունք ունիք, պարոն Արիս, ամենեւին ըրջութիւն չկայ... Այս խելացի խօսքին վրայ ես կը մեկնիմ :

Զար.— Կեցիր, Արփինէ, թէյը միասին խմենք :

Արփինէ.— Սիրով, Պ. Արիսը այնչափ խօսեցաւ որ ծարաւցուց ամէնքս ալ :

Արիս.— Իրաւունք ունիք... արդէն նեղացած էի... այսօր գործարանին մէջ դէպք մը պատահեցաւ... երկրաչափս ճամբեցի... :

Արփինէ.— Ո՛հ, ինչո՞ւ... :

Արիս.— Երկու գծագրիչներու հետ պարած մի-

ջոցին վրայ հասայ և բարկանալով ճամբեցի զայն, որպէս զի երթայ ուրիշ տեղ պարէ :

Արփինէ, (խոհուն).— Զեզի առաջարկելիք մէկը ունիմ... :

Արիս.— Պարե՞լ գիտէ...

Արփինէ.— Օ՛, ո՛չ. շատ նշանաւոր տղայ մըն է :

Արիս.— Տեսնենք : Եկէք թէյ խմելու : (Բոլորն ալ սեղանասուն կ'երթան : Մարկոս կը գոցէ խորի դռները : Քիչ ետք, աջ կողմի՝ դռնէն կ'երեւի Լեւոն Բարակեան, գոր ներս կ'առաջնորդուի Մարիամի կողմէ) :

### Ե. ՏԵՍԻԼ

#### Լեւոն և Մարիամ

Մարիամ.— Ներողամիտ եղէք, պարոն :

Լեւոն, (Խարհաւ, կարհասես, գոյնը նետած ձեռնոցներով, մաշած սրէնկօքով երիսասարդ մը).— Ներողութիւն մի՛ խնդրէք, օրիորդ, արդէն բոլոր դռնապաններն ալ այս ձեւով կը վարուին հետս, չեմ գիտեր թէ ինչու համար :

Մարիամ.— Մեր դռնապանը քիչ մը չափաւոր է :

Լեւոն.— Կարծեմ քիչ մը խենդ է : Երբ հարգուցի անոր թէ ո՛ւր կը բնակի Պ. Սարիմեան, կնոջ մը հետ պարելու վրայ էր... տարօրինակ պար մը... :

Մարիամ.— Ուրեմն, եթէ պարոնը կը սպասէ, երթամ իմաց տամ էֆէնտիին : (Կ'ելլէ) :

### Զ. ՏԵՍԻԼ

#### Լեւոն՝ առանձին, յետոյ Արփինէ

Լեւոն.— Արփինէն ըսած էր որ ժամը հինգին հոս գտնուիմ, եթէ կայ նեղութիւն մը, ան ալ Պ. Սարիմեանը չի ճանչնալս է... գեղեցիկ գործարան մը ունի... բայց պիտի ուզէ՞ հոն մտնել գիս :

Արփինէ, (կը մտնէ, զգուշութեամբ).— Բը՛սթ...  
Լեւո՛ն...  
Լեւոն, (յափեցակեալ).— Ա՛ն... դուք, Արփի-

նէ՛...  
Արփինէ.— Լուսնէ՛ք, ձայն մի՛ հանէք: Քովի  
սենեակն էի, երբ սպասուէին բերաւ ձեր այցաքար-  
դը՝ պարոնին:

Լեւոն.— Ա՛ն, ի՞նչ ըսաւ:

Արփ.— «Աս անասունը ով է» ըսաւ:

Լեւոն.— Չար սատանայ, կ'երեւի տրամադիր չէ  
գործի վրայ խօսելու:

Արփ.— Այդպէ՞ս կը կարծես:

Լեւոն.— Թերեւս վաճառէ զիս:

Արփ.— Բայց ո՛չ. պէտք է միշտ յուսալ. բաղդը

այդպէս կուգայ:

Լեւոն.— Ո՛հ, գիտեմ ըսելիքը. «Պարոն, պա-  
րապ պաշտօն մը բլլալուն պէս կը կանչենք ձեզի»:

Արփ.— Բայց կայ պարապ պաշտօն մը. նոր ճամ-  
բեց իր երկրաչափը... Արդէն ծնողքիս ուզածն ալ  
այս է... նշանածս գործ մը ունենայ:

Լեւոն.— Եւ որչափ դժուար է այդ. մանաւանդ  
վկայականներ ունեցողին համար:

Արփ.— Ճիշդ է... Տիկին կանաչեանը կը ճանչ-  
նա՞ք:

Լեւոն.— Քիչ մը: Երեկոյթի մը միջոցին հայելի  
մը տապալեցի անոր վրայ:

Արփ.— Շատ լաւ: Ըսէք իրեն որ Տիկ. կանաչ-  
եանի կողմէն կուգաք: Մեծ ազգեցութիւն ունի այդ  
տիկինը այս տունին մէջ:

Լեւոն.— Աւելի լաւ է որ անեմ քալեմ:

Արփ.— Քիչ մը քաջութիւն ունեցիր Լեւոն...  
Օ՛հ, եթէ ես էրիկմարդ ըլլայի...

Լեւոն.— Դուք ալ ին ի չափ նեղութիւն պիտի  
զգայիք... Չէք գիտեր թէ որչափ դժուար բան է

մարդ ըլլալ և կնոջ մը սիրտն ունենալ...  
Արփ.— Վերջապէս այո՛ կամ ո՛չ, կ'ուզէ՞ք ա-  
մուսինս ըլլալ:

Լեւոն.— Ստի՛ք զատ մտածում ունեցած չեմ:

Արփ.— Լաւ ուրեմն, ամուր կեցէք, երդումը  
բէք ինծի որ այդ պաշտօնը ձեռք չձգած ասկէ դուրս  
չպիտի ելլէք:

Լեւոն.— Կ'երդնում:

Արփ.— Եւ հիմա, ա՛հ քեզի քաջալերելու հա-  
մար (Լեւոնը կը համբուրէ եւ կը վազէ դէպի ձախ).  
պտոյտ մը բնելով պիտի գամ: Եկած ատենս ամէն  
բան վերջացած ըլլալու է: Յտեսութիւն: (Կ'ելլէ):

է. ՏԵՍԻԼ ASSADOURIAN  
AMATEUR-COIQUE

Լեւոն, Մարիամ, Մարկոս, Արիստակէս

Լեւոն, (առանձին).— Պէտք է որ ամէն ինչ վեր-  
ջանայ... Եւ ամէն ինչ պիտի վերջանայ արդէն:

Մարիամ, (կը մտնէ).— Ներողութիւննիդ կը խնդ-  
րեմ, պարոն, մոոցեր էի ձեզի... էֆէնտին հիմա  
պիտի գայ:

Լեւոն.— Շնորհակալ եմ, օրիորդ:

Մարկոս, (մտնելով).— Մարիամ, քիեզ կու  
կանչիեն:

Մարիամ.— Հիմա կ'երթամ:

Մարկոս.— Կա՛ց, կա՛ց, Մարիամ, սովորե-  
ցա՛յ...

Մարիամ.— Ի՞նչը...

Մարկոս.— Իսա, չիլի թիանկօն...

Մարիամ.— Հայտէ՛ դուն ալ:

Մարկոս.— Քիտնում օր սովորիցայ, Մարիամ...

Մարիամ.— Ա՛խ, ինծի ալ սորվեցուր:

Մարկոս.— Հո՞ս... հապա խանութները վրայ  
գիան:

Մարիամ.— Մի՛ վախնար, չայ կը խմեն:

Մարկոս, (կամաց).— Ա՞ն. (Լեւոնը ցոյց կուսայ):  
 Մարիամ.— Օ՛հ, անօթիին մէկը: Գործ փնտ-  
 սելու եկած է:  
 Մարկոս.— Դէ՛ կրեցիր դիէմս...  
 Մարիամ.— Հայտէ՛...  
 Լեւոն. (մեկուսի).— Ի՞նչ է բրածնին...  
 Արիստակէս, (սեմին վրայ).— Դո՛ւք, զո՛ւք ալ...  
 Մարիամ.— Ա՛հ, էֆէնտին:  
 Մարկոս.— Վա՛յ, չիար սաղանայ:  
 Արիս.— Դո՛ւքս ելէք, շո՛ւտ...  
 Մարիամ, (կամաց՝ Մարկոսին).— Աժան սղատե-  
 ցանք: (Կ'ելեն երկուքն ալ):

Ը. ՏԵՍԻԼ

Լեւոն և Արիստակէս

Արիս.— Պարո՛ն, ներեցէք այս փոքր միջադէ-  
 պին համար:  
 Լեւոն.— Քաւ լիցի, պարոն:  
 Արիս.— Տեսնենք ի՞նչ կը փափաքիք:  
 Լեւոն.— Իմացայ ըստիլը թէ ձեր երկրաչափ-  
 ներու մարմին մէջ պարսպ տեղ մը կայ:  
 Արիս.— Ո՞վ բաւ ձեզի ատիկայ:  
 Լեւոն.— Այսինքն... զրոյց մը...  
 Արիս.— Ինչո՞ւ կը խառնուին իմ գործիս...  
 Լեւոն.— Բայց, ճամբեր էք, չէ՞...  
 Արիս.— Դուք ոտտիկա՞ն էք:  
 Լեւոն.— Դժբախտաբար ոչ. որովհետեւ այն ա-  
 տեն գործ փնտսելու պէտք չպիտի ունենայի:  
 Արիս.— Ուրեմն ի՞նչպէս պիտի գիտնայիք այս  
 քանր, որ մէկուն չեմ բսած:  
 Լեւոն.— Թողունք բացատրութիւնը: Հիմա մէ-  
 կուն պէտք ունիք... Կրնամ ինքզինքս յանձնարա-  
 բել իմ էին բարեկամուհիս՝ Տիկին Կանաչեանի  
 Կողմէ:

Արիս.— Ա՛հ, կը ճանչնա՞ք զայն:  
 Լեւոն.— Այո՛... այսինքն... կը ճանչնամ ա-  
 ռանց ճանչնալու:  
 Արիս.— Իմ կեանքս թունաւորեց ան, կ'իմա-  
 նտ՞ք, չատ գէշ կին մըն է...  
 Լեւոն, (ապաւած).— Աւելի լաւ է խոստովանիլ որ  
 ամենեւին չեմ ճանչնար զայն:  
 Արիս.— Ուրեմն ինչո՞ւ կը դիմէք անոր յանձ-  
 նարարութեան:  
 Լեւոն.— Ձեմ գիտեր... ատանկ գաղափար մը  
 ունեցայ... այլևս անոր խօսքը չեմ բներ:  
 Արիս.— Ես ալ այդ խրատը կուտամ ձեզի...  
 Նստեցէ՛ք:  
 Լեւոն, (երկչոս).— Անպատճառ պէ՞տք է... լաւ.  
 (կը նստի):  
 Արիս.— Երկրաչափ էք. ի՞նչ ճիւղի:  
 Լեւոն.— Հանքային: Դպրոցէն առաջին ելայ:  
 Արիս., (հեզմանով).— Ո՛հ, ձեր դպրոցէն ելլող-  
 ներուն բոլորն ալ այդպէս կ'ըսեն:  
 Լեւոն.— Ներողութիւն, ես անոնց վրայ մեծ  
 առաւելութիւն մը ունիմ. որովհետեւ իրա՛ւ երկ-  
 րորդ ելած եմ:  
 Արիս.— Ես անանկ թուղթի կտորներու կարե-  
 ւորութիւն չեմ տար:  
 Լեւոն, (սխուր).— Ես չատ կարեւորութիւն կու-  
 տամ:  
 Արիս.— Որչափ չանիլ կ'ուզէք:  
 Լեւոն.— Ձեր առաջարկածին մէկ երրորդէն ա-  
 ւելի:  
 Արիս.— Կարելի բան չէ:  
 Լեւոն.— Ես կ'ընդունիմ, որովհետեւ գիտեմ թէ  
 դուք չպիտի ընդունիք:  
 Արիս.— Պարո՛ն, չեմ ուզեր ժամանակի կորուստ  
 պատճառել ձեզի... ուստի...

Լեւոն, (անոր խօսքը կտրելով).— Կ'արձանագրէք իննգրանքս...

Արիս.— Այո՛... և...

Լեւոն.— Պարագ տեղ մը ըլլալուն պէս պիտի իմացնէ՞ք ինծի: Սրտանց շնորհակալութիւն:

Արիս.— Ի՛նչ տարօրինակ տղայ... Կատա՛ւած ոչ-խարի կը նմանի:

Լեւոն.— Ինչ որ եմ ան եմ... մէկ բան միայն կ'ըսեմ ձեզի, պարոն, որ մը կը գտնենք զիրար, և այն ատեն զուրկ պիտի պաղատիք ինծի որ ձեր քով մտնեմ:

Արիս.— Կը զարմացնէք զիս... սակայն ամէն բան կարելի է... Թողէք որ ճամբան ցոյց տամ ձեզի:

Լեւոն, (ելլելով).— Հարկ չկայ. ճամբան զիտեմ... մնաք բարով. (ելած պահուն պատիկ կը զարնուի):

Արիս., (առանձին).— Ի՛նչ այլանդակ մարդ...:

Թ. ՏԵՍԻԼ

Արիստակէս. Ալիս և Շաքէ

Ալիս, (կը մտնէ).— Առանձին ես, հայրիկ:  
Շաքէ, (նոյնպէս).— Պարոնը մեկնեցա՞ւ. ո՞վ էր:

Արիս.— Այլանդակ մարդուն մէկը, Տիկին Կանաչեանի կողմէն կուգար:

Ալիս.— Ի՞նչ...

Արիս.— Տեսակ մը խենդ... վա՛նտեցի գնաց... Ես գործիս կ'երթամ: (Ձախեմ կ'ելի):

Ժ. ՏԵՍԻԼ

Ալիս, Շաքէ, յետոյ Լեւոն

Ալիս.— Իմացա՞ր:

Շաքէ.— Այո՛, այդ պարոնը Տիկ. Կանաչեանի կողմէ կուգար:

Ալիս.— Թերեւս պարի ուսուցիչն էր:

Շաքէ.— Անտարակոյս:

Ալիս.— Ի՛նչ դժբախտութիւն:

Շաքէ.— Անշուշտ, սաստիկ բարկացած է:

Ալիս.— Կը վախնամ որ այդպէս է:

Շաքէ.— Շիտակը, հայրիկը չա՛վը կ'անցընէ:

Լեւոն, (մտնելով, մեկուսի).— Բայց ո՛չ, այսպէս

եւտ չպիտի երթամ... ես երդում ըրի:

Շաքէ, (Կամաց՝ Ալիսին).— Ա՛ն է:

Ալիս, (նոյնպէս).— Ետ դարձեր է:

Լեւոն, (մեկուսի).— Երկու նորատի աղջիկներ.

անշուշտ աղջիկներն են:

Շաքէ, (բարձր).— Ներողութիւն, պարոն, Տիկ.

Կանաչեանի կողմէ եկողը զո՞ւր էիք:

Լեւոն.— Չեմ գիտեր թէ ի՛նչ ըսեմ, քանի որ

յաջողութիւն չեմ գտներ:

Ալիս.— Ա՛հ, զո՞ւր էիք որ հիմա հայրիկը...

Լեւոն.— Վա՛նտեց... այո՛, օրիորդ:

Շաքէ.— Պէտք է ներողամիտ ըլլաք. նախապէս

լուր չունէր թէ մենք կանչել տուած էինք ձեզի:

Լեւոն, (Ձարմանալով).— Ա՛հ, զո՞ւր կանչել...

Ալիս.— Այո՛, Տիկ. Կանաչեան ձեզի ըսած պիտի

ըլլայ:

Լեւոն, (եռանդով).— Անշուշտ, անշուշտ. այդ

սիրելի Տիկ. Կանաչեանը:

Շաքէ.— Արդէն մայրիկը պիտի խօսի ձեզի այս

մասին, (դէպի դուրս). Մայրի՛կ, մայրի՛կ:

Լեւոն, (մեկուսի).— Անտարակոյս թիւրիմացութիւն մը կայ... պա՛հ, տեսնենք ի՛նչ կ'ըլլայ:

ԺԱ. ՏԵՍԻԼ

Նոյնք և Տիկին Ջարուհի

Ջարուհի, (կը մտնէ).— Ի՛նչ կայ, Շաքէ:

Շաքէ, (Լեւոնը կը ներկայացնէ).— Այս պարոնը

Տիկ. Կանաչեանի կողմէն...

2790-55

Զարուհի, (առաջանալով)։— Ա՛հ, այո՛, գոհ եմ  
ձեզ տեսնելուս, պարոն։

Լեւոն.— Ես ալ նոյնպէս, տիկին։

Զարուհի.— Հաճեցէք ուրեմն նստիլ։

Լեւոն.— Այնպէս սիրով։

Ալիս, (կամաց՝ Շաֆէին)։— Ի՛նչ ազնուակօն կեր-  
պարանք ունի։

Զարուհի.— Տիկին կանաչեան ըսաւ մեզի ձեր  
պայմանները։

Լեւոն.— Ա՛հ, գիտէ՞ զանոնք ուրեմն։

Զարուհի.— Քիչ ժը սուշ է։

Լեւոն.— Այդպէ՞ս կը գտնէք։

Զար.— Այո՛, բայց ձեզ նման արուեստագէտի մը  
հետ չի սակարկուիր. կ'ընդունինք Տիկին կանաչ-  
եանի գինը։

Լեւոն.— Գործը գիտէ։ Աւելի որոշ խօսինք։

Զարուհի.— Ժամը վեց ոսկի, այդպէս չէ՞։

Լեւոն.— Այո՛, գրեթէ։ (մեկուսի)։ Ինչի՞ն ժամը։

Զար.— Շարաթը երեք անգամ... կրնա՞ք։

Լեւոն, (շփոթ)։— Հըմ... այո՛... թոյլ տուէք  
որ տետրակիս աչք մը նետեմ. (կը նայի տետրակիս)։

Այո՛, այո, կրնայ ըլլալ։

Զար.— Եթէ կարելի է, հիմա սկսինք։

Լեւոն.— Իսկոյն... բայց... ներողութիւն, ի՛նչ

կ'ուզէք որ սորվեցնեմ ձեզի։

Զար.— Բայց, թանկօն, զոր դուք կ'ուսուցա-

նէք։

Լեւոն, (ապշտ)։— Ա՛հ, կ'ուզէք որ...

Ալիս.— Հորկաւ։

Զար.— Ես դաշնակին կը նստիմ։

Լեւոն.— Սպասեցէք, ինքզինքս գտնեմ...

Զար.— Օ՛ն, ուրեմն։

Լեւոն, (մեկուսի)։— Աստուած իմ, զուն օգնէ  
ինձի. (բարձր)։ Նուագեցէք։

Զար., (նուագելով)։— Ասիկա՞ է։

Լեւոն, (մեկուսի)։— Օ՛ն, ի՛նչ գեղեցիկ նուագ.  
մարդ կը փոխադրուի երջանիկ աշխարհի մը մէջ,  
ուր պէտք չունենար ապրուստը շահելու գոմէշներու  
պէս... օրօրի պէս անսուշ է...

Ալիս, (կամաց՝ Շաֆէի)։— Տեղէն չերեքար։

Շաքէ, (նղմպես)։— Կը խորհրդածէ։

Լեւոն, (մեկուսի)։— Ա՛հ, ազրիլ հո՛ն... օրօր-  
սեկով և քսան հազար ֆրանք եկամուտով...

Զար., (կենալով)։— Սկսի՞նք, պարոն։

Լեւոն, (սրափելով)։— Պատրաստ եմ, սիրելի  
տիկին։

Զար.— Ի՞նչպէս է... եղանակը պիտի յարմարի՞։

Լեւոն.— Այո՛... գրեթէ... կը յարմարցնենք։  
(Մեկուսի)։ Ի՞նչ յիմար եմ, վարը ծառաներուն պա-  
րածը սաւանդից հոգնեմ։

Զար.— Ուրեմն կը սկսիմ։

Լեւոն.— Շատ լաւ... տեղերնիդ կեցէք։

Ալիս.— Ահաւասիկ։

Լեւոն.— Ուշադրութիւն... երեք քայլ առաջ...  
մէ՛կ, երկու։

Շաքէ, (Ալիսի հետ երկու քայլ կ'առնէ)։— Վե՛ր-  
ջը...

Լեւոն.— Վերջը... (մեկուսի)։ Վե՛րջը... ես ալ  
չեմ գիտեր... (բարձր)։ Վերջը աջ ոտքերնիդ կ'առ-  
նէք ձեռքերնուդ մէջ... այսպէս։ (Մեկ ոտքը կը բռն-  
նէ ու կը սկսի դառնալ. այդ միջոցին կը մտնէ Արիս-  
տակես կեֆեսի)։

ԺԲ. ՏԵՍԻԼ

Նոյնք և Արիստակէս Սարիմեան

Արիս.— Ա՞ն ինչ է... աս ի՛նչ խայտառակու-  
թիւն է։

Ալիս.— Հայրի՛ կը...

Լեւոն, (մեկուսի).— Քաջութի՛ւն Լեւոն:

Արիս., (կասաղօրէն).— Տունէն ներս մտնելուս  
անպատճառ պարող խեղկատակնե՞ր պիտի գտնեմ:

Զար., (կ'ելի).— Արի՛ս, կ'աղաչեմ:

Արիս.— Աս վոնտած մարդս ի՞նչ գործ սենի հոս:

Լեւոն, (մեկուսի).— Համարձակութի՛ւն. (բարձր).  
Տիկի՛ն, կ'աղաչեմ, ազատեցէք զիս այս մարդէն:

Արիս.— Այս մարդը մի՛...

Լեւոն, (խորխոս).— Ձեմ հասկնար թէ ինչո՛ւ կը  
թողուն որ ուէ մէկը նախատէ արուեստադէտ մը:

Արիս., (բարկութեամբ).— Հիմա պիտի պայ-  
թիմ:

Ալիս.— Վարպետ, կ'աղաչեմ...

Լեւոն.— Ո՛չ, օրիորդ, քանի որ չեմ կրնար ինք-  
զինքս յարգել տալ, կը քաշուիմ կ'երթամ...

Զար., (բարկութեամբ՝ ամուսնին).— Տեսա՞ր հի-  
մա ըրածդ, տեսա՞ր...

Արիս, (արճնեղած).— Ի՞նչ, յանցաւորը ե՞ս եմ:

Զար.— Պիտի երթայ...

Արիս.— Ճէ՛նէննէմին տակը թող երթայ...

Լեւոն.— Կ'երթամ իմ պատիւովս...

Արիս.— Սատանային ծա՛կը գնայ...

Ալիս և Շաքէ, (կանչելով Լեւոնի).— Ո՛չ, ո՛չ,  
կ'աղաչենք կեցէք:

Զար.— Արի՛ս, կը խնդրեմ, մի թողուր որ եր-  
թայ: Շիլիական բուն թանկօն լգիտէ:

Արիս, (կակուղցած).— Ի՞նչը, ի՞նչ կ'ըսես...

Զար.— Այո՛, կը պաղատիմ, մի՛ թողուր որ եր-  
թայ:

Ալիս և Շաքէ.— Հայրի՛կ, հայրի՛կ, կը պաղա-  
տինք:

Արիս.— Ըսելիքէ՛կայ... խոնարհինք. (Լեւոնին).  
Պարո՛ն...

Լեւոն, (խորխոս).— Ներողութիւն պիտի խնդ-  
րէ՛ք:

Արիս.— Այո՛, խոնարհաբար ներողութիւն կը  
խնդրեմ, և կը պաղատիմ որ հաճիք տունս մնալ:

Լեւոն.— Իբրեւ երկրաչա՞փ:

Արիս.— Իբր երկրաչափ ձեր պարապ ժամերուն.  
բայց մանաւանդ իբրեւ թանկոյի դասատու. պիտի  
սորվեցնէք զայն կնոջս, աղջիկներուս, ծառաներուս  
և նոյնիսկ ինծի:

Լեւոն, (գարմանով).— Ձեզի՞ մի:

Արիս.— Այո՛. գործերնուդ կուզա՞յ:

Լեւոն.— Կ'ընդունիմ մնալ:

Զար., (ուրախութեան ամուսնին վիզը կը փաթ-  
բուի).— Արի՛ս, որչա՞փ հաճոյակատար ես:

Ալիս և Շաքէ, (նոյնպէս).— Ա՛հ, հայրի՛կ... (կը  
մտնէ Արիսին):

ԺԳ. ՏԵՍԻԼ

Նոյնք և Արփինէ

Արփինէ, (միւսներուն իրար համբուրած միջոցին  
Լեւոնին).— Ի՞նչպէս եղաւ:

Լեւոն.— Գործը կարգին է. գործարանին երկ-  
րաչափն եմ և տանը թանկոյի դասատուն:

Արփինէ.— Ի՞նչ ըսիք, չհասկցայ:

Լեւոն.— Լուէ՛, ետքը կը հասկնաս: (Բարձր).  
Գգուանքը կը բաւէ՛... Օ՛ն, սկսինք: Պ. Արիստա-  
կէս, աջ ոտքը տնկուած, երեք քայլ առաջ... Մէ՛կ,  
երկո՛ւ...:

**P. ASSADOURIAN**  
**AMATEUR-COMIQUE**

ՎԱՐԱԳՈՅՐԸ Կ'ԻՋՆԷ


Նոր հրատարակուած կատակերգութիւններ

Վիռի հաշարանին սպասաւորը	15 դր.
Գործարանին Երկրաչափը	15 դր.
48 Օխանոց գլխու փորձանքը	20 դր.
Դղումի Վանառականը (Ձ. Արեակեան)	15 դր.
Հնարամիտ Վարձակալը (Ձ. Արեակեան)	15 դր.



Յազոդաբար պիտի հրատարակուին հետեւեալ  
կատակերգութիւնները

ՀՆՍՐԱՄԻՏ ՏԱՆՏԷՐԸ	մէկ արար
ՋԳԵՍՏԻՆ ԴԵՐԸ	մէկ արար
ԿՄԾԻ ՃԱՇԱՐԱՆՍԵՐԸ	մէկ արար
ՀԱՄԲՈՅՐԻ ՄԸ ՀԱՄԱՐ...	մէկ արար
ՄԷԿ ԿՆԻԿ. ԵՐԿՈՒ ԷՐԻԿ...	մէկ արար



Կեդրոնասեղի՝

**ՅԱԿՈՐ ԱՐՐԱՀԱՄԵԱՆ**

Պոլիս, Անգարա Ճասսկի, Բեռլի Էմ. Խան



